չկայացած, հետևաբար նաև առարկայագուրկ է չկայացած ընթացակարգի անվավերության հարցի հետագա քննությունը:

25.03.2026 թվականին Դատարանը, գործի լուծման համար նշանակություն ունեցող վկայակոչված հանգամանքների վերաբերյալ գործին մասնակցող անձանցից պարզաբանումներ ստանալու նպատակով, որոշմամբ նշանակել է դատական նիստ: 03.04.2026 թվականին նշանակված դատական նիստ կայացել է, սակայն դատական նիստի վայրի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված գործին մասնակցող անձինք, չեն ներկայացրել:

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով 02.03.2026 թվականին հայցվորի կողմից էլեկտրոնային դատավարություն համակարգի միջոցով ներկայացված հայցադիմումը վերադարձնելու մասին միջնորդություն, ինչպես նաև պատասխանողի հայտնած դիրքորոշումը ըստ որի «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, Դատարանն գտնում է, որ այլևս Դատարանի քննությանը ենթակա վեճ առկա չէ, որպիսի պարագայում սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

<u>6. Գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման վերաբերյալ դատարանի պատճառաբանությունը.</u>

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման (...) հարցերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ «Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայցվոր կողմը վճարել է պետական տուրքը, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման վեճն ըստ էության սպառված հիմքով, Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

(IV) Եզրափակիչ մաս

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 110-րդ, 182-րդ, 183-րդ, 199-րդ, 200-րդ, 361-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/2120/02/26 քաղաքացիական գործի վարույթը ըստ հայցի «ԷՄՀԱՐ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ ՀՀ առողջապահության նախարարության՝ ՀՀ առողջապահության նախարարության «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/25» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակված հրավերի 1-ին չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» պահանջը և 2-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված «Համակարգչային տոմոգրաֆ GE Healthcare Revolution Maxima կամ համարժեք Philips Healthcare Philips Incisive CT կամ համարժեք Siemens Healthineers Somatom Go Top» պահանջը անվավեր ճանաչելու պահանջի մասին, կարճել՝ վեճն ըստ էության սպառված լինելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և նույն ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

4. Որոշումը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am